



## BURBANK UNIFIED SCHOOL DISTRICT

Department of Elementary Education

1900 WEST OLIVE AVENUE

BURBANK, CALIFORNIA 91506-2460

TELEPHONE (818) 729-4492 FAX (818) 729-4403

Հունվար 2023

Հարգելի ծնողներ/պահապաններ,

Փետրվարի 21-27-ի (երեքշաբթից մինչև երկուշաբթի) ծնողական ժողովների մոտենալու առիթով, ես ցանկանում եմ ծանոթացնել ձեզ, թե ինչպես են այս տարվա ժողովները կայանալու: Ուսուցիչը կկապվի ձեզ հետ ծնողական ժողովի օր նշանակելու համար, եթե հարկ լինի քննարկել երեխայի 3-ից ցածր ստացած գնահատականները:

Փետրվար ամսվա ծնողական ժողովները ընտրովի են լինելու, եթե անցումային մանկապարտեզից (TK) մինչև 5-րդ դասարաններում սովորող ձեր երեխան (ները) չափանիշների վրա հիմնված գնահատականների թերթիկում ստացել է (են) 3 կամ ավելի բարձր գնահատական: Ընտանիքներին հարմար լինելու համար, ծնողական ժողովները կարող են տեղի ունենալ առցանց եղանակով: Խնդրում ենք տեղեկացնել երեխայի ուսուցչին, թե ինչպես եք ցանկանում ներկայանալ ժողովին:

Եթե ձեր երեխայի ուսուցիչը կապ չի հաստատել ձեզ հետ, բայց դուք ցանկանում եք առցանց կամ անձամբ հանդիպել նրա հետ, խնդրում ենք դիմել ուսուցչին էլեկտրոնային փոստի նամակի միջոցով և հանդիպում պահանջել: Ծնողական ժողովները տեղի կունենան երեքշաբթի, 2023 թվականի փետրվարի 21-ից մինչև երկուշաբթի, փետրվարի 27-ը:

Այդ օրերին, 1-5-րդ դասարանների աշակերտների դասերը շուտ կավարտվեն:

Անկեղծորեն,

Դոկտոր Փիտր Ջ. Քնապիկ

Տարրական կրթության վարիչ

---